# Ա Ն Ե Ծ Ք Ն Ե Ր

*Անեծքները շատ տարածված են կանանց մեջ։ Անեծքին շատ են դիմում մանավանդ պառավ կանայք։*

*Շատ և անթիվ են այդ անեծքները. հավաքել անեծքը շատ դժվար է։ Քաղաքում արդեն հայախոսների քանակը քչացել է, ռուսախոսները չգիտեն այդ անեծքները։ Դըրանք պահված են գյուղերում։*

*Մենք մեջ ենք բերում ամենատարածված անեծքները։*

*Աժանի շըլաս մեռնի հասնելու։*
*Աժանի շըլաս նոր լուսին դեսնելու։*
*Աժանի շըլաս ցանած հացդ ժողվելու։*
*Աժանի շըլաս դեղ հասնելու։*
*Ալեֆի գեր լան ցորենիդ չարանները։*
*Ախտարմիշ լա գովդադ։*
*Աղի բես հալիս։*
*Աղու լեղի լա գերած-խմածդ։*
*Աղուզեֆիր ուդխս-խըմիս։*
*Աջի գուզդ։*
*Անեծքեջոխ ըլաս։*
*Անգալ տառնաս, անգալ մնաս։*
*Անգարածագի էշթաս։*
*Անբես էշթաս, որ մեմալ եդ շըգաս։*
*Անբդուղ ըլա փսագդ։*
*Անդեր-անդիրական մնաս։*
*Անդենը ծուլթի խալգինին մեշը էփիս։*
*Աչքե-պերանե գարոդ մնաս։*
*Աչքեդես, պերնե գարոդ մնաս՝*
*Աչքիդ լուսը վար վազի։*
*Աստծո բագիժը վրադ ըլա։*
*Աստուծով մուժուժ ըլաս։*
*Արոմլվա ըլաս։*
*Արած կեշութինդ տիմացդ կա։*
*Արած կեշութինդ սրդիդ վրան ֆիթիլ ըլլա։*
*Արած կեշութինդ ֆիթիլ-ֆիթիլ քիթիդ էլլե։*

*Բաբանձվի լեզուդ։*
*Բադովի լեղիդ։*
*Բուհուի բես մենագ մնաս։*

*Գած ու գրագի էշթաս։*
*Գուբուդ տանան մոշթին, հոքուդ պաժնին։*
*Գաջգդուր ըլաս։*
*Գաբելու պարի չունենաս։*
*Գեմիդ խայայի զարնե։*
*Գերածդ քեղի ուդե։*
*Գերածդ էնքսեդ էշթա, խեղտվիս։*
*Գոռբե-գոռբ էշթաս։*
*Գոդռի ձեռքդ։*
*Գոդռի ոտքդ։*
*Գոդռի ոտքդ, կնացած շամփեդ եդ շըկաս։*
*Գոդռի մեշքդ։*
*Գդոր-գդոր անին քեզի։*
*Գրագի էշթաս։*
*Գրագ ըյնի նեսթիդ։*
*Գրագ ըյնի ջիգարդ։*
*Գրագի գեր էշթաս։*
*Գրագ ուդխս։*
*Գուրանաս, գուր աղքադ մուրաս։*
*Գուրանաս, գուր ման կաս։*

*Դարմադաղըմ ըլաք բեքիմ։*
*Դունդ վրադ զըշվին։*
*Դունիդ բադերը վրադ զըշվին։*
*Դունով-դեղով ալեֆի գեր ըլաք։*
*Դուշմանի խնդացք ըլա։*

*Եգիդ օգըզբաշին ծեռքդ պռնած մնաս։*

*Զավագներեդ շըխնդաս։*
*Զավագներուդ էրեսեն գարոդ մնաս։*
*Զըշվի դունիդ օջախըխը։*

*Էշթալդ ըլա, կալդա շըլա։*
*Էրիս, մըրգվիս և խանծվիս։*

Էրդու շաբիքդ մեզ հատ տառնա։
Էրվի ջիգարդ։
Էրվի, մրգվի ննսթիդ։

Թարախ դապե սաղ մարմինդ։
Թարախ վազի դամարներեդ։
Թուր ու տանագի էշթաս։
Թուքրդ պնրանըդ չորնա։

Ժամին տոււը դայնած մուրաս։

Լացը-գոծը անբադաս ըլա շեմեդ։
Լեշդ (մեռելդ) գոձին գադուննրը։
Լեշդ հանին։
Լեշդ մեյդանը մնա, կերեղման դանող
  չըկդնվի։
Լեշդ դարածները դեսնում։
Լուծը վիզդ անցունուն, վիզդ դագը մնա։
Լուսի գարոդ մնաս։
Լուս օրդ սևնա։
Լուս օր չըդեսնուս։

Խամշին ծեռքդ պռնված մնաս։
Խանդռի էրեսիդ կունը։
Խաչջամփան մնաս։
Խնդումի էրես չըդեսնուս։
Խնդումի էրես հեչ չըդեսնուս։
Խուլանա անգաչդ։
Խուլանա խանութիդ առևդուրը։
Խուլանաս, մնջվիս։
Խուլանա շեմիդ շենութինը։
Խուլանա դունդ-դեղդ։

Ծեռքիդ հացը կնդինով ըլա։
Ծեռքդ-ոտքդ ճըղլ-ճրղլ ըլան։
Ծիրդ լուղենը ծեռքդ պռնած մնաս։

Կեդինը մդնիս։
Կեգնին դակը մգնիս՝
Կերեղմանիդ ջամփան պացվի։
Կերեղմանիդ վրան գադունները խաղան։
Կլոխդ վար անելու դեղ չըկդնիս։
Կլոխդ փորեդ դագող անին։
Կլխուդ վրան զըշվի գունդ։
Կնացած ջամփադ չորնա, փուշ ու խոռ-
  վա ելնե տիմացդ։
Կնացած ջամփեդ եդ չըկաս։

Հազար վայ թեփեիդ։
Հալավներըդ ծալքի դոլապը ծալած
  մնան։
Հաշիս-հաշիս՝ հաց չըկդնուս։
Հարամ ըլա գերածդ։
Հարամ ըլա գովդայիդ։

Հարամ հացը քիթեդ-պերանեդ ելնե։
Հարամ սադգիս։
Հարամ վաստագդ հոքուդ պաժնին։
Հենդեք-հենդեքի էշթաս։
Հեչ մութեն լուս չելնիս։
Հարդ-մարդ անիծվի։
Հոքուդ մոմ վառին։
Հոքուդ դուռը քանդվի։
Հորմեդ-մորմեդ գարոդ մնաս։

Ջանդռած փորով սեռըթմիշ ըլաս։
Ջերութդ մեզ հագ պունա չունենաս։
Ջերութըդ մեզ հագ քոշայի գարոդ մնաս։
Ջըռվի պերանդ։
Ջըռվի մեջքդ։
Ջըռվի չանգադ։
Ջըռվի վիզդ։

Ճուրը ըյնիս, էրես չելնիս։
Ճրվաթդ կլոխդ ղարնե։

Մահը թեփեիդ։
Մահը նստե շեմերուդ վրան։
Մահր դեսնի էրեսդ։
Մահ բուգիդ։
Մահ ելնի տիմացդ։
Մահի գեր ըլաս։
Մահին գուշտը մդնիս։
Մահին դագը էշթաս։
Մահ-խըզղըն ուդիս
Մահ հաքնիս, մահ գաբիս՝
Մահ նստե էրեսդ։
Մահս կլուխտ։
Մահս փորդ։
Մահվան տող լցվի վրադ։
Մահվան խաբեր ստանաս։
Մահվան գրագի արժանի լաս։
Մահ փաթթվի էրեսդ։
Մահ ուդիս։
Մարի օջախդ։
Մարի օջախիդ գրագը։
Մարի ծանդ։
Մեզ գտոր հացի գարոդ մնաս։
Մեզ բուդ ճուր դվող չունենաս։
Մահմենական գրագին մեջը դաբգվիս։
Մահմենական ցավի հանդիբիս։
Մեռելդ լվանալու ճուր դաքցունուն։
Մեռելդ փաթթին ջերմագ սավանով։
Մեռելիդ բադարաքին չանգը զարնին։
Մեռելիդ չանգը գարնին։
Մեռելիդ չանգին ձանը լսիմ։

Մնչվիս բեքիմ՝
Մոհրվի պերանդ։
Մուխդ մարի։
Մուրագըդ փորդ մնա։
Մուր քսվի սև էրեսդ։

Յոխ ըլաս։

Նոր հալավդ հաքած նաշին մեչը բառ-
  դիս։
Նեֆեսով բարիի գարոդ մնաս։

Շեմերդ գոխող ըլա։
Շուները գըռծին միսդ։
Շուները ուգին կլուխդ։
Շունի-կալի գեր ըլաս։
Շունի դաթ ձըձիս։

Ջառփումիշ ըլաս։
Ջըշորանա աչքիդ արցունքը։
Ջորնա աչըդ։
Ջորնա աչքիդ բեբեքը։
Ջորնա թույախը տուռիդ պարիին։
Ջորնա լեզուդ։
Ջորնա խաֆայիդ մինր։
Ջորնա ձառերուդ քոքը՝
Ջորնա ծիձդ ձոցիգ մեչ։
Ջորնա մեչքդ։
Ջորնա բորգդ։
Ջորս ոտքի վրա քալիս։
Ջորնա օխտը բորդդ։

Ոշգի-չիչուի գեր ըլաս։

Պառազնային մեչը սադկի եզդ։
Պռնվի զարդած ձեռքդ։
Պռնվի ծեռքիդ դամարը։
Պռնվի մեջքդ։
Պռնվի նեֆեսդ (գդռվի նեֆեսդ)։
Պռնվի ձրվաթըդ։
Պռնվի չանգադ։
Պռնվի վիզդ։

Ջըզքվի բաշախդ։
Ջըբռոգին էրգու աչքդ։

Սադանան դեսնի էրեսդ։
Սարին դակը մնաս։
Սելը դանե քեղի։
Սեռըթմիշ ըլաս՝
Սև ըլա էրեսդ։
Սևին մեչեն հեչ չելնիս։
Սև խաբեր ստանաս։
(Խարա-խաբեր պերին)։

Ծև հաքնվիս, սև գաբիս։
Սևնա անունդ։
Սևնա բախտըդ։
Սևնա կլոխդ։
Սևնա թուխումդ։
Սևնա ըռզ-նամուսդ։
Սևնա գառաջիգդ։
Սևնա գյանքդ։
Սևնա հոքիդ։
Սևնա ջիգարդ։
Սևնա շուքդ։
Սևնա բադիվգ։
Սևնա ուջուլթդ։
Սևնա օրըդ։
Սև փսագի արժանի ըլաս՝
Սև օրերը անբագաս ըլան դունիդ մեչը։
Սև օրըդ դեսնիմ։
Սև ֆողին արժանի լաս։
Սև ֆող մդնելու արժանի չըլաս, լեշդ
  գազանները ուդին։
Սերսեմլեմիշ ըլաս. սերսեմը գոխե քեղի։
Սիրագանեդ չըխնդաս։
Սիրագանիդ հոքուն անիս։

Վազիս-վազիս, դարթիդ դարման
  չըկդնիս։
Վար ըյնի աչքիդ գոբը։
Վիզդ պռնած, կործիդ տագը մնաս։
Վիզդ դակը մնա։
Վրայիդ յարան դանե կերեզման։

Տադիս, տադիս՝ տարգակ մնաս։
Տուռիդ շեմը քոռանա։

Ցանիդ վրան փուշ փըսնի։
Ցավիդ չարը չըկդնիս։
Ցավիդ մեչը փթտիս։
Ցավս փորդ։
Ցնորվիս, ցընդվիս բեքիմ՝

Ուժեդ, լուսեդ ղըգվիս։
Ուխտիդ ջամփան մնաս։
Ուջուլթդ վերնա։
Ունիմ-չունիմդ խունգի-մոմի ձախսիս։
Ունիմ-չունիմդ մեգ ֆըշթնայի էշթա։
Ուռիս-փըշվիս բեքիմ։
Ուռի-փչվի դալախդ։
Ուռում-չուռումի էշթաս։

Փաթլամիշ ըլա աչքիդ բեբեքը։
Փաթլամիշ ըլա չար աչքդ։

Փաթլամիշ լա աչքդ։
Փաթլամիշ լա փորդ։
Փախուլթինեդ ջաթիս բեքիմ։
Փրթաի աղղին մեջը ղոնադիդ շաքիքը։
Փթտի ղոնադիդ շաքիքը, առանց շարիքի
մեռնիս։
Փթտիս յարային մեջը։
Փըթտի ջիղարդ։
Փորղ-աղիքդ վար վաղի։
Փուշ տառնա ղոշակիդ մեջի փուշտը՝
Փուռշախ Թափվի ցանիդ վրան։

Քաղցած-ծարավ սադդիս։
Քաշվի ծեռքիղ դամարը։
Քաշվի չանդադ։
Քապիկե մուր մնաս։
Քար տառնա սլերանիդ հացը։
Քարը կլոխդ։
Քար ու փադ ելնե առչեդ։
Քիթղ-ղերանդ ալ արուն ըլա։
Քոռնա աչքիդ լուսը։

Քոռնա էրգու աչքդ։
Քոռնա ձիձդ։
Քոռնա գովիդ ձիձը։
Քոռնա չորվախիդ աչքը։
Քոռնա դունդ-շեմըդ։
Քոռնա ճրհորդ։
Քոռ բուհու տառնա։
Քոռնա աչքիդ բեբեքը։
Քոռնա աչքդ։
Քոռնաս բեքիմ։
Քոս գապե սաղ մարմինդ՝
Քոքին վրան չորնա ցանդ։

Օխտը ժամին դագը փթտիս։
Օխտը դերդի դեր ըլաս։
Օխտը դարի ցավ քաշիս։
Օխտը դերե ման կաս։
Օցը վիզիդ փաթտվի։
Օշիլին մեջը գորցվիս։
Օրըղ գըդրվի։